# ԻՆՉՊԵ՞Ս ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՎԱՐՔԸ

## ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀՍՏԱԿ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Եթե ընտանիքում ընդունված կանոնները հստակ են, հասկանալի, հետևողական, երեխան սովորում է հստակության, ապահովության և չի «փորձարկում» ծնողներին:

## ԴՐԱԿԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄՆԵՐ, ԽՐԱԽՈՒՍԱՆՔՆԵՐ

Երեխան պետք է սովոր լինի, որ իրեն ոչ միայն նախատում են, այլև գնահատում, արժևորում: Ընդ որում՝ խոսքը խոսքային գնահատականի և այլ ձևերի մասին է (գովեստ, գրկախառնություն, շոյել և այլն):

## ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

Երեխայի վարքը և արարքները պետք է ունենան հստակ հետևանքներ: Խոսքը թե՛ բացասական, թե՛ դրական արարքների մասին է:

## ՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ, ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երեխաները հեշտությամբ «բռնացնում» են ծնողների սխալները, բացթողումները ուստի պետք է միշտ հետևողական լինել ընտրված ուղում:

## ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքի բոլոր անդամները պետք է հետևեն նույն կանոններին, նույնատիպ մոտեցում ցուցաբերեն երեխայի վարքի հանդեպ, այլապես երեխան սովորում է մանիպուլյացնել ծնողներին և ավելի հաճախ դրսևորել բացասական վարք:

## ՎԱՐՔԻ ՄՈԴԵԼՆԵՐ

Եթե ծնողը երեխայից սպասում է այս կամ այն վարքը, նա պետք է հստակ մոդել և օրինակ հանդիսանա երեխայի համար: Երեխան կրկնօրինակում է, սովորում է շրջապատից:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

unicef
յուրաքանչյուր երեխայի համար



Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP
Armenian Association of Child and Educational Psychologists